



Հայաստանի կենսաբ. հանդես, 1(63), 2011

ՄԵՂՐԱՏՈՒ ՄԵՂՈՒՆԵՐԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԱՆԿՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ԱՇԽԱՐՀԻ ՏԱՐԲԵՐ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ռ.Լ. ԾԱՌՈՒԿՅԱՆ, Ն.Մ. ՀԱԿՈԲՅԱՆ, Կ.Թ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

,Մուլտի Ագրոն գիտաարտադրական կենտրոն
kavetisyan@multi-agro.am

Հոդվածում բերված է տարբեր երկրների գիտնականների կարծիքը մեղրատնային մեղուների զանգվածային անկման վերաբերյալ: Վերջին տարիների դիտումները ցույց են տվել, որ Հայաստանում աշնանը, ձմռանը և գարնանը մեղվաընտանիքների անկման դեպքերի հիմնական պատճառը *Varroa jacobsoni* տիգն է: Մեղվաբույծների կողմից ոչ ճիշտ և ոչ ժամանակին բուժումը, ինչպես նաև դեղանյութերի սխալ ընտրությունը բարդացնում են բուժման ընթացքը և հանգեցնում մեղվաընտանիքների մահացության:

Հոդվածում նաև բերված են ներկայումս օգտագործվող պատրաստուկների անվանումները և դրանց կիրառման մեթոդները:

Մեղրածաղկափոշային խուլս – մեղվաընտանիքի կոլապս – վարրոատոզ

В статье приводятся мнения ученых о гибели пчел в различных странах. Наши наблюдения за последние несколько лет показали, что причиной гибели пчелиных семей в Армении осенью, зимой и весной в основном является клещ *Varroa jacobsoni*. Неправильное, несвоевременное лечение пчеловодами, а также ошибочный выбор препаратов осложняют процесс лечения и приводят к гибели пчел.

Приводятся существующие препараты и способ их употребления.

Перга – коллапс пчелиной семьи – варроатоз

The article deals with the opinions of various scientists about Colony Collapse Disorder (CCD) of honeybees in the different countries. Our observations in recent years has shown that the mite of *Varroa jacobsoni* is a cause of death bee colonies in Armenia in the autumn, in the winter and in the spring. Wrongly, untimely treatment by beekeepers and also the erroneous choice of preparations complicate treatment process or lead to death of bees.

Existing preparations and a method of their using were presented as well.

Bee-bread – colony collapse disorder – varroamite

Վերջին տարիներին աշխարհի տարբեր երկրներում մեղվաբույծներն անհանգստանում են մեղվաընտանիքների զանգվածային անկման համար: 2006 թ. ամբողջ աշխարհում սատկել են ավելի քան 1 միլիոն մեղվաընտանիքներ: 2007 թ. տարբեր եվրոպական երկրներում մեղվաընտանիքների անկումը հասել է 25-60 %-ի: 2007-2008 թթ. ընթացքում Ռուսաստանի Դաշնությունում ընտանիքների թիվը կրճատվել է 40 %-ով: 2009 թ. ԱՄՆ-ը հայտարարեց այն մասին, որ մեղվաընտանիքների 1/3 մասը սատկել է ձմռանը: Մի խումբ գիտնականների կարծիքով մեղվաընտանիքների անհետացումը ամբողջ աշխարհի մասշտաբով կարող է պատճառել շուրջ 350 միլիարդ եվրոյի չափով վնաս: Միաժամանակ ընդհանուր վնասը զգալիորեն գերազանցում է այդ թվին, քանի որ գնահատել երկրի վրա մեկ օրում մեղուների կատարած դերը կենսաբանական բազմազանության պահպանման և զարգացման գործում՝ անհնար է [3]:

Մեղունների անհետացումը ոչ միայն հանգեցնում է բազմաթիվ բույսերի և կենդանիների տեսակների թվաքանակի կտրուկ նվազմանը, այլ նաև՝ բնական ռեսուրսների կրճատմանը:

Մի խումբ մեղվաբույծներ կարծում են, որ մեղվաբնտանիքների անկման պատճառը նոր հիվանդություն է և այն անվանել են ,մեղվաբնտանիքի կոլապս: Վերջինիս վերաբերյալ գիտնականներն ունեն տարբեր կարծիքներ: Ըստ որոշ հետազոտողների՝ հիմնական պատճառները հետևյալն են.

- 1.մեղրաձաղկափոշային խույսում գտնվող մնացորդային պեստիցիդների ազդեցությունը,
- 2.բազմաթիվ դեղամիջոցների օգտագործումը,
- 3.գենետիկորեն մոդիֆիկացված գյուղատնտեսական կուլտուրաների լայնորեն տարածված լինելը,
- 4.նոր վիրուսային, սնկային և այլ հիվանդությունների զարգացումը, որոնք խաթարում են մեղունների իմունային համակարգը,
- 5.մեղունների կողմնորոշման վրա բջջային և տիեզերական ռադիոալիքային կապի ազդեցությունը [7; 5; 9]:

Մեր դիտումները ցույց են տվել, որ աշնանը որոշ ընտանիքներ, հատկապես ուժեղները, որոնք ունեն շատ ավելի մեծ կերապաշար քան պահանջվում է, կարճ ժամանակահատվածում սկսում են թուլանալ և ի վերջո անհետանում են: Մի խումբ գիտնականներ կածում են, որ այդ մեղունները կորցնում են կողմնորոշվելու բնագործ, այսինքն՝ ճառագայթվելու հետևանքով վնասվում է նրանց ուղեղի տեսողական կենտրոնը [7]: Հարկ է նշել, որ վաղուց ապացուցված է բջջային կապի բացասաբար անդադարձը մարդու՝ և առաջին հերթին նրա ուղեղի վրա:

2010 թ. մեր ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Հայաստանում շատ մեղվաբույծներ ունեցել են ավելի քան 50 %-ի չափով ընտանիքների անկումներ:

Գիտնականների մյուս մասը գտնում է, որ մեղվաբնտանիքների կորստի հիմնական պատճառը *Varroa jacobsoni* տիգն է՝ բակտերիալ և վիրուսային հիվանդությունների հետ համատեղ [1;6]:

Ներկայումս մեղվաբուծության զարգացման համար լուրջ արգելքներից մեկը շարունակում է մնալ վարրոատոգ ինվազիոն հիվանդությունը: Այն հաճախ նպաստում է մեղունների այլ հիվանդությունների զարգացմանը՝ զգալի բարդացնելով մեղվաբնտանիքի վիճակը: Մեղունները թշնամաբար չեն վերաբերում տգերին, քանի որ դրանք արտադրում են պալմեստինային թթվի միացություններ. այդ նյութերը պարունակվում են նաև մեղվամոմում և մեղվի մարմնում:

Ապացուցվել է, որ վարրոատոգով 4 %-ից ավելի վարակվածության դեպքում մեղվաբնտանիքը կարող է լքել բույնը աշնանը կամ՝ սատկել ձմռանը:

Տիզը բավականին բարձր հարմարողականություն ունի դեղամիջոցների նկատմամբ [4;2]: Հաշվի առնելով այդ՝ անհրաժեշտ է ժամանակ առ ժամանակ փոփոխել դեղամիջոցը՝ օգտագործելով տարբեր քիմիական բաղադրության պատրաստուկներ: Այդ դեպքում բուժման արդյունավետությունը զգալիորեն կբարձրանա:

Վարրոատոգով բարձր աստիճանի վարակվածության դեպքում զարնանը, ամռան վերջում և աշնան սկզբում մեղվանոցի տարածքում կարելի է տեսնել չվնասված կամ առանց թևերի ու ոտքերի սողացող, երիտասարդ մեղուններ, մեղրահացի բջիջներում սատկած թրթուրներ. դրանք արտացոլում են փտախտի կլինիկական պատկերը:

Եթե աշնանը մեղվաբնտանիքի վարրոատոգով վարակվածությունը հասնում է մինչև 20 %-ի, ապա այդպիսի ընտանիքը նույնիսկ դեղամիջոցներով մշակումից հետո լքում է բույնը աշնանը կամ՝ սատկում ձմռանը:

Գարնանը սատկած ընտանիքներում լինում է հետևյալ պատկերը. մեղրահացերում չօգտագործված մեղր, փեթակի հատակին գտնվող մեղրահացերից թափված սատկած մեղուններ և տգեր: Եթե զգուշորեն իրարից հեռացնենք մեղուններին, ապա հատակին կերևան մեծ քանակությամբ սատկած տգեր:

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում չի արտադրվում որևէ դեղամիջոց մեղունների հիվանդությունների բուժման համար: Ռուսաստանի Դաշնությունում արտադրվում են հետևյալ դեղամիջոցները վարրոատոգի դեմ. ակվա-վլո, ակարասան, ամիպոլ (S, ապիդեզ, ապիտակ, ապիլինոլ, ապիմաքս (բալասան), բիվարոլ, բիպին, բիպին (S, դիլաբիկ, թրթնջկաթթու, մրջնաթթու, յանտրին, նեոբամ, ՊԱԿ-750 Ա, պոլիսան, սանոքս, վարրոասան, վարրոապոլ, վարրոադեզ, վետֆոր, տանգ, տեդա, ֆուլիսան [8], որոնցից ներմուծվում են Հայաստան ակարասան, ամիպոլ(S, ապիդեզ,

ապիտակ, բիպին, բիպին (S, թրթնջկաթթու, պոլիսան և ֆումիսան պրեպարատները:

Այժմ արտադրվում են հետևյալ հակավիրուսային պատրաստուկները, որոնք նպաստում են նաև մեղվաընտանիքի աճին և զարգացմանը. անտիվիր, էնդոգլյուկին, լոզևալ, վիրուսան: Դրանք կարելի է նաև օգտագործել որպես պրոֆիլակտիկ միջոց:

Ճիշտ և ժամանակին բուժման դեպքում մեղվաընտանիքների անկումները կարելի է հասցնել նվազագույնի:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Батуев Ю.М., Гробов О.Ф., Березина Л.К., Сичанок Е.В., Сазонова С.А.* Опустошительная гибель пчел в США. Пчеловодство, 5, стр. 28-30, 2008.
2. *Батуев Ю.М., Дриняев В.А., Березина Л.К., Новик Т.С., Тихомирова О.И.* Устойчивость клеща варроа к препаратам. Пчеловодство, 1, стр. 24-25, 2010.
3. *Гробов О.Ф., Руденко Е.В., Клочко Р.Т.* Причины гибели пчел в Европе. Пчеловодство, 8, стр. 20-22, 2009.
4. *Клочко Р.Т.* Несколько советов в защиту пчел. Пчеловодство, 10, стр. 22-23, 2009.
5. *Корзун А.* Причины коллапса пчелиных семей. Пчеловодство, 7, стр. 29-30, 2008.
6. *Ледомский Н.А.* Пчелы в опасности. Пчеловодство, 9, стр. 30, 2009.
7. *Пономарев А.С.* Поиск причины гибели пчел. Пчеловодство, 7, стр. 32, 2009.
8. *Чупахина О.К.* Новые препараты к осенним обработкам пчелиных семей. Пчеловодство, 9, стр. 27, 2009.
9. *Mariano Higes, Raquel Martin-Hernandez, Cristina Boyias et al.* Зарубежные ученые о Nozema ceranae (Подготовил М. Гудков). Пчеловодство, 10, стр. 24-25, 2009.

Ստացվել է 10.12.2010